

<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒՄ ՈԵԿԱԾԵ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՏԱՐՈՂ, ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴԱՅԱՏ



Ա.Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

<<03>> հուլիսի 2020թ

## ԿԱՐԾՔ

### ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Տիգրան Վալերիի Բեգլարյանի <<Բնակարանային ֆոնդի ընդլայնման և արդիականացման ֆինանսական մեխանիզմների զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում>> թեմայով, Հ.00.03-<<Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի <<Ֆինանսներ>> ամբոնի նիստում: Նիստին ներկա էին՝ <<Ֆինանսներ>> ամբիոնի վարիչ, տ.գ.դ պրոֆեսոր Ա.Բ.Սալնազարյանը (նախագահող), տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Մաթևոսյանը (գրախոսող), տ.գ.թ., դոցենտ Է.Աղաբեկյանը, տ.գ.թ., դոցենտ Ս.Պողոսյանը,

տ.գ.թ., դոցենտ Կ.Միքայելյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Ֆահրայյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Բաղդասարյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Սշանյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Ժամկոչյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Ներսիսյանը (գրախոսող), տ.գ.թ., ասիստենտ Մ.Խաչատրյանը, տ.գ.թ., ասիստենտ Ն. Սուլյանը, տ.գ.թ., ասիստենտ Լ.Հարությունյանը, տ.գ.թ., ասիստենտ Լ.Հովականյանը, տ.գ.թ., ասիստենտ Վ.Երանոսյանը, տ.գ.թ., ասիստենտ Օ.Փափազյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Առաքելյանը, ասիստենտներ Ն.Բալասանյանը, Ա.Խալաթյանը, ամբիոնի ավագ լաբորանտ Հ.Սաֆարյանը, լաբորանտ Ռ.Բուղադյանը, ինչպես նաև ասպիրանտներ և հայցորդներ:

### **Ատենախոսության թեմայի արդիականությունը**

Տիգրան Վալերիի Բեգլարյանի <<Բնակարանային ֆոնդի ընդլայնման և արդիականացման ֆինանսական մեխանիզմների զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում>> թեմայով ատենախոսությունը նվիրված է ՀՀ-ում բնակարանաշինության և բնակֆոնդի արդիականացման ֆինանսական կարգավորումներին առնչվող մի շարք հիմնախնդիրների հետազոտությանը և դրանց վերաբերյալ լուծման ուղիների առաջարկմանը:

Բնակարանաշինությունը և բնակարանների վերականգնում՝ որպես բնակելի շինությունների փոխարինման ու վերականգնման գործընթաց, համարվում է որակյալ բնակելի միջավայրի ձևավորման հիմնական պայման: Վերականգնման դեպքում տեղի է ունենում բնակարանների սպառողական և տնտեսական բնութագրերի բարելավում, ավելանում է բնակարանի՝ որպես տնտեսական բարիքի, ապրանքի և եկամուտների

աղբյուրի արժեքը: Վերականգնման էքստենսիվ և ինտենսիվ մեթոդների միջոցով ապահովում է բնակչության պարզ և լոնդլայնված վերարտադրությունը: Բնակարանային շինարարության, բնակչությի վերականգնման և նորացման նպատակային միջոցառումների ու ծրագրերի իրականացմանը խոչընդոտող հիմնական գործոններից է կայուն ներդրումային ինստիտուցիոնալ հոսքերի և հարթակների բացակայությունը:

Հարկ է նշել, որ մեծ թվով հայ հետազոտող տնտեսագետներ ևս անդրադարձել են իրենց հետազոտություններում Հայաստանի տնտեսության բնակարանաշինության և բնակարանների վերակառուցման հատվածում ներդրումների և ֆինանսավորման հիմնախնդիրներին: Սակայն պետք է նշել, որ այդ ուսումնասիրությունների անմիջական առարկան ներդրումային միջավայրի ընդհանուր հարցերն են՝ առանց հիմնավորելու բնակչինարարության կայուն ներդրումային հոսքերի և հարթակների ապահովման մեխանիզմները: Բերված փաստարկներով ատենախոսը հիմնավորել է ընտրված թեմայի հրատապությունը և արդիականությունը:

**Ատենախոտության հիմնական բովանդակությունը, ստացված արդյունքների հավաստիությունը, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը**

Հետազոտության նպատակն է արտերկրյա և հայրենական փորձի հիման վրա մշակել ու առաջարկել ՀՀ-ում բնակարանաշինության և բնակարանների վերակառուցման պետական կարգավորման և ներդրումների խթանման մոտեցումներ ու կոնկրետ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կընձեռեն ձևավորել կայուն ներդրումային և

ֆինանսական հոսքեր՝ ապահովելով տվյալ որութիւնը մրցունակությունն ու կայունությունը: Դրված նպատակի իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որն էլ թելադրում է ատենախոսության տրամաբանությունն ու կառուցվածքը, հետևաբար և աշխատանքում առաջադրվել է խնդիրների համապատասխան շրջանակ:

Հետազոտությունում որպես օբյեկտ ընտրվել են Հայաստանի Հանրապետությունում բնակարանաշինության և բնակարանների վերակառուցման ինստիտուցիոնալ, կազմակերպչական և իրավական ձևերն ու ֆինանսավորման հիմունքները: Իսկ հետազոտության առարկան ՀՀ-ում բնակարանաշինության և բնակարանների վերակառուցման պետական կարգավորման և ներդրումների խթանման համակարգի կատարելագործման հիմնահարցերն են:

Ատենախոսության կառուցվածքը տրամաբանական է՝ բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ ու առաջարկություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության գլխավոր նպատակը և խնդիրները, ներկայացվել են հիմնական գիտական արդյունքները և դրանց գործնական նշանակությունը, տրվել են ատենախոսության տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:

Առաջին՝ <<Միջազգային պրակտիկայում բնակարանաշինության ոլորտում ներդրումային գործընթացների կարգավորման մեթոդաբանությունը և համակարգերը>> գլխում ներկայացվել է զարգացած և զարգացող երկրներում տնտեսության և ներդրումային գործընթացների կարգավորման մեթոդաբանությունը և բնակարանաշինության ոլորտում

ներդրումների ժամանակակից տեսլենցները, ինչպես նաև՝ ԵԱՏՄ երկրներում բնակարանաշինության ոլորտում ներդրումների կարգավորման համակարգերի ընդհանուր օրինաչափությունները և առանձնահատկությունները:

Աշխատանքի երկրորդ՝ <<Հայաստանի Հանրապետությունում քաղաքային բնակարանային ֆոնդի շինարարության, վերակառուցման և հիմնանորոգման ոլորտում ներդրումների վիճակի համադրելի վերլուծությունը>> գլխում, իրականացվել է ԵԱՏՄ երկրներում քաղաքային բնակարանային ֆոնդի շինարարության, հիմնանորոգման և վերակառուցման ֆինանսավորման մակարդակի և վիճակի համեմատական վերլուծություն, ինչպես նաև՝ արտասահմանյան երկրներում բնակարանաշինության և քաղաքային բնակարանային ֆոնդի վերականգնման համար ներդրումներ կատարելու գործնական մեխանիզմները, Հայաստանի Հանրապետությունում քաղաքային բնակելի ֆոնդի շինարարության, վերակառուցման և հիմնանորոգման գործում ներդրումների վիճակը, ձևաչափը և մակարդակը:

Երրորդ՝ <<Հայաստանի Հանրապետությունում բնակարանաշինության և բնակարանների վերակառուցման ներդրումների հարթակի կառուցման հայեցակարգը, մոտեցումները և մեխանիզմները>> գլխի շրջանակներում, հեղինակը ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում բնակարանային շինարարության և վերակառուցման ծրագրերի ներդրումային հարթակների մատրիցայի ձևավորման պետական քաղաքականության հայեցակարգը, հիմնական գերակայությունները և սկզբունքները, ինչպես նաև՝ ՀՀ-ում սոցիալական հիվորթերային,

բնակարանաշինության և հիփոթեքային շուկայի պետական խթանման ֆինանսական միջոցները, Հայաստանի Հանրապետությունում բնակարանաշինության արդյունաբերության ներդրումային հարթակը՝ ըստ բնակարանաշինության խնայողությունների և հիփոթեքային վարկավորման ձևաչափի, ըստ բանկային ծրագրային ֆինանսավորման ձևաչափի և Հայաստանի Հանրապետությունում ակտիվների արժեթղթավորման սխեմայով բնակարանային շինարարության և վերակառուցման ծրագրերում ներդրումների հարթակի մշակման անհրաժեշտությունը:

Եզրակացություններ և առաջարկություններ բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերի ուսումնասիրությունից բխող եզրահանգումներ, ներկայացվել են վերլուծությամբ հիմնավորված առաջարկություններ:

Աշխատանքի առավելություններից մեկն այն է, որ ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ներկայացվել են հետևյալ դրույթները.

- Աշակվել է քաղաքային բնակչության, նոր բազմաբնակարան շինությունների, առկա բնակչությի վերակառուցման ներդրումների և ֆինանսավորման ինը հոսքերի հաշվեկշռված ներգրավման բազմաքայլ հարթակ՝ հաշվի առնելով ա) պետական բյուջեի վրա բեռի կրծատումը, բ) ծրագրերի ոիսկայնության աստիճանի իջեցումը, գ) ներդրումների շահութաբերության բարձրացումը և այլ ցուցանիշներ:

- Մշակվել է հիփոթեքային վարկերի արժեթղթավորման մատրիցայի ձևավորման հայեցակարգ՝ նպատակ՝ ունենալով ՀՀ-ում վերաֆինանսավորելու բնակարանների շինարարության և բնակարանների վերակառուցման համար միջոցները:
- Շինխնայողությունների և հիփոթեքային վարկերի հիման վրա մշակվել է ՀՀ բնակարանային շինարարության ոլորտում ներդրումների հարթակ, որը հաշվի է առնում պետության, ներդրողների, կապալառուների և ֆինանսական շուկայի մասնակիցների շահերը:
- Մշակվել է պետական սոցիալական բնակչունդի և սոցիալական հիփոթեքի ձևավորման համալիր մոտեցում, որը հիմնված է հատուկ սերտիֆիկատների կիրառման, գործարքների թվայնացման, սոցիալական բնակչունդի մասնակի սուբսիդավորման և գրավիչ տոկոսադրույքների մեխանիզմի կիրառման վրա:

### ***Հիտողություններ ատենախոսության վերաբերյալ***

Թվարկված առավելությունների հետ մեկտեղ թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները.

1. Ատենախոսի կողմից առաջարկված գիտական առաջին նորույթում նշվում է <<...Մշակվել է քաղաքային բնակչունդի, նոր բազմաբնակարան շինությունների, առկա բնակչունդի վերակառուցման ներդրումների և ֆինանսավորման ինը հոսքերի հաշվեկշռված ներգրավման բազմաքայլ հարթակ ըստ հետևյալ չափանիշների...>>: Մեր կարծիքով, տվյալ նորույթի առավել խորը հիմնավորման և դրա տեսագործնական նշանակության

շեշտադրման տեսանկյունից, խիստ կարևոր էր, որպեսզի հստակեցվեին ընտրված չափանիշների նշանակությունները և դրանց կիրառման նպատակահարմարությունը:

2. Ատենախոսը չորրորդ նորույթում նշել է <<...Մշակվել է պետական սոցիալական բնակֆոնդի և սոցիալական հիփոթեքի ձևավորման համալիր մոտեցում, որը հիմնված է հատուկ սերտիֆիկատների կիրառման, գործարքների թվայնացման, սոցիալական բնակֆոնդի մասնակի սուբսիդավորման և գրավիչ տոկոսադրույքների մեխանիզմի կիրառման վրա... >>: Այս նորույթի հետ կապված լիարժեք հիմնավորված չէ, թե ի՞նչու է անհրաժեշտ կիրառել հատուկ սերտիֆիկատներ և ինչո՞վ է պայմանավորված գրավիչ տոկոսադրույքի տարբերակումը, ինչպես է այն որոշվում:

3. Աշխատանքում վիճակագրական տվյալները առանձին դեպքերում ներառում են 2013-2017թթ. ընկած ժամանակահատվածը, օրինակ թիվ 1-ից 9-ը, 17 աղյուսակները: Մեր կարծիքով, վերջին 2018-2019 թթ. տվյալների վերլուծությունը ևս հնարավորություն կտար ստանալ առավել ամբողջական գնահատականներ:

4. Աշխատանքը հարուստ է վերլուծություններով և եզարակացություններով, սակայն կարծում ենք, որ կոնկրետ խնդիրների վերաբերյալ առաջարկված մի շարք լուծումներ՝ կապված բնակֆոնդի վերակառուցման հարցերի տեսանկյունից, ուղղակիորեն պետք է տրվեին կոնկրետ օրինակների վրա կատարված հաշվարկներով՝ ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցների լիարժեք հիմնավորումներով:

5. Աշխատանքում առկա չեն հավելվածներ բաժինը, չնայած այն հանգամանքին, որ կիրառվել է մեծ ծավալի վիճակագրական

տեղեկատվություն: Կարծում ենք, որ մի շաբթ իրավական, մեթոդաբանական բնույթի դրույթներ, հիմնավորող հաշվակներն առավել նպատակահարմար կլիներ ներկայացնել հավելվածներ բաժնում՝ բեռնաթափելով աշխատանքի ընդհանուր բովանդակային հատվածը:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Նշված դիտողությունները, կարծում ենք, էապես չեն ազդում ատենախոսության գիտական մակարդակի և գործնական նշանակության ընդհանուր գնահատականի վրա:

Ամփոփելով շարադրվածքը, կարելի է հավաստել, որ ատենախոս Տիգրան Վալերիի Բեգլարյանը կատարել է արդիական, ուշագրավ, ծավալուն, տեսամեթոդական և կիրառական բնույթի հետազոտություն:

Ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական ուր հոդվածներում որպես գիտական նորույթ ներկայացված դրույթները, ըստ էության, ստացել են իրենց լուսաբանումը, որոնք կարող են ունենալ ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակություն:

Վերը շարադրվածքը թույլ է տալիս եզրակացնել, որ Տիգրան Վալերիի Բեգլարյանի <<Բնակարանային ֆոնդի ընդլայնման և արդիականացման ֆինանսական մեխանիզմների զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում>> թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է <<Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման>> կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Տիգրան Վալերիի Բեգլարյանը արժանի

Է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը Ը.00.03  
- <<Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում>> մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» ամբիոնի (առցանց) նիստում 26.06.2020թ (արձանագրություն թիվ 14):

ՀՊՏՀ <<Ֆինանսներ>> ամբիոնի վարիչ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  Ա.Բ.Սալնազարյան

ՀՊՏՀ <<Ֆինանսներ>> ամբիոնի պրոֆեսոր,  
տնտեսագիտության դոկտոր  Ա.Վ.Մարթևոսյան

ՀՊՏՀ <<Ֆինանսներ>> ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու  Ա.Վ.Ներսիսյան

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Բ.Սալնազարյանի,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Վ.Մարթևոսյանի,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Ներսիսյանի  
ստորագրությունները հաստատում են

ՀՊՏՀ գիտ.քարտուղար



Ն.Հ.Դարբինյան